6) վերահսկողություն է իրականացնում հաստատության ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ

իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և մենյուների պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅԶԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

65. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

66. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

67. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

68. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

69. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

70. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

71. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

72. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները:

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

73. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

74. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվար 2022 թվականի թիվ 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԵՂՐԱԶՈՐ
ԳՅՈՒՂԻ ՄԱՍՎԵԼ ՍՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի
<<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի
կանոնադրությունը՝ կազմակերպության անվանման փոփոխությամբ պայմանավորված՝
համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Մեղրաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-
ի <<Մեղրաձոր համայնքի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոնի կանոնադրությունը հաստատելու
և Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 30-ի N 14
որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 14 որոշումը:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կազմվել է <<11 >> հունվարի 2022թ
Բաղկացած է 8 թերթից
Հաստատված է ՀՀ Կոտայքի մարզի
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2022 թվականի հունվարի 14-ի
N 14 որոշմամբ
Համայնքի ղեկավար՝

Ն. Հարությունյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
<<ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԻՄՆԱՐԿ

Ծաղկաձոր

2022թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) հիմնարկ է: Այն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, սույն կանոնադրությամբ այլ իրավական ակտերով: Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոնը>> հիմնարկը հանդիսանում է <<Մեղրաձոր համայնքի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի /գրանցման համար՝ **85.180.72531/** նախկին անվանում՝ <<Կոտայքի մարզի Մեղրաձորի մարզամշակութային կենտրոն>> հիմնարկ իրավահաջորդը:

Կենտրոնը ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված կրթական ծրագրեր, ստանձնում է անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2. Կենտրոնի հասցեն է՝ ՀՀ Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր, 5-րդ փողոց, 9-րդ շենք:

3. Կենտրոնի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ - Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն հիմնարկ ,

2) հայերեն կրճատ՝ <<Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Ս. Մուրադյանի անվան ՄՄԿ>> հիմնարկ:

3) ռուսերեն լրիվ՝ - Община Цахкадзор, село Меградзор, Спортивнокультурный центр имени Самвела Мурадяна:

4) անգլերեն լրիվ՝ Tsakhkadzor community of Kotayk region of the Republic of Armenia <<After Samvel Muradyan Sport and cultural center institution of Meghradzor village>>

4. Կենտրոնն ունի ինքնուրույն հաշվեկշիռ ու բանկային հաշիվ:

5. Կենտրոնն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

6. Կենտրոնն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

7. Կենտրոնում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

8. Կենտրոնի գործունեության առարկան և նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների վերհանումը, գեղագիտական, ռազմահայրենասիրական դաստիարակությունը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորումը, բազմակողմանի մշակութային ու մարմնամարզական դաստիարակությունը, բնակչության (առանց տարիքային սահմանափակման) ազատ ժամանցի կազմակերպումը:

9. Կենտրոնն ապահովում է սովորողների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, նրանց առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը:

10. Կենտրոնի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի

ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
11. Կենտրոնի հիմնական խնդիրներն են.

- 1) ազգային մշակութային արժեքների քարոզումը,
- 2) սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական բնապահպանական դաստիարակության ապահովումը,
- 3) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
- 4) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը,
- 5) ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների ու գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների ու հմտությունների զարգացումը,
- 6) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

12. Կենտրոնը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

- 1) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում,
- 2) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,
- 3) ճամբարների կազմակերպում,
- 4) կրթական գործունեության այլ տեսակներ,
- 5) ցուցահանդեսների և մշակութային այլ միջոցառումների կազմակերպում,
- 6) համագործակցություն մշակութային այլ կազմակերպությունների հետ,
- 7) կենտրոնը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

13. Կենտրոնի կազմի մեջ մտնում է Կենտրոնում գործող խմբակները և գրադարան ընթերցասրահը:

14. Կազմակերպությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սովորողների համար սկսվում է սեպտեմբերի 1-ին: Ուսումնական տարվա տևողությունը չպետք է պակաս լինի, քան 34 շաբաթ: Կենտրոնում սահմանված է վեցօրյա ուսումնական շաբաթ:

15. Մանկավարժական կազմի համար ուսումնական տարին սկսվում է ընթացիկ տարվա օգոստոսի 26-ից և ավարտվում հաջորդ տարվա հուլիսի 31-ին:

16. Խմբակային դասաժամի տևողությունը սահմանված է 45 րոպե:

17. Կենտրոնի տնօրենը պարտավոր է մինչև ուսումնական տարվա սկիզբը կենտրոնին ապահովել անհրաժեշտ մասնագետներով՝ նրանց ընդունումն ու ազատումը համաձայնեցնելով ՀՀ օրենսդրության պահանջներին:

18. Կենտրոնը գործունեություն կազմակերպելու համար պետք է ունենա եկամուտների, ծախսեր ընդհանուր նախահաշիվ, որը հաստատվում է կենտրոնի տնօրենի, համայնքի ղեկավարի կողմից՝ ավագանու որոշմամբ:

19. Ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներ են՝

- 1) հատկացումներ բյուջեից,
- 2) պետական, հասարակական և այլ կազմակերպությունների, ֆիզիկական անձանց նվիրատվություններ, բարեգործական ակցիաներ,
- 3) բանկային վարկեր,
- 4) սեփական միջեցոցների վարձակալում,
- 5) այլ մուտքեր:

20.Կենտրոնն իրավունք ունի ձեռք բերել երկարատև վարկեր՝ ծառայությունների ոլորտի ընդլայնման, անհրաժեշտ գույք և սարքավորումներ ձեռք բերելու, կառուցապատման, վերանորոգման և շինարարության համար:

21.Կենտրոնը կարող է գործարկել ժամանցի անցկացման վայրեր, այդ թվում՝ անհատական համակարգչային դասընթացների, սեղանի խաղերի, սպորտային կամ այլ խաղերի կազմակերպում, մարզման սենյակների, ատրակցիոնների, խաղահրապարակների, զբոսայգիների, դահլիճների շահագործում:

22.Իրավունք ունի վարձով տալ սեփական տարածքը, երաժշտական գործիքներ, կուլտուր-սպորտային գույք, երաժշտական տեխնիկա, բեմական զգեստներ, թատերական ռեկվիզիտ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

23.Կենտրոնի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

24.Կենտրոնի հիմնադիրն ունի կենտրոնի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով հաստատված դեպքերի:

25.Կենտրոնի հիմնադրի բացառիկ լիազորություններն են.

- 1)ավագանու համաձայնությամբ կենտրոնի հիմնումը,
- 2)կենտրոնի գործունեության առարկայի և նպատակների , այդ թվում՝ նրա կողմից իր ականացվող ձեռնարկատիրական գործունեությանտեսակների սահմանումը,
- 3)կենտրոնին սեփականության իրավունքով հանձնվող և/ կամ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
- 4)կենտրոնի կառավարման համակարգի հաստատում,
- 5)կենտրոնի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
- 6)կենտրոնի վերակազմակերպումն ու լուծարումը,
- 7)կենտրոնի լուծարման հանձնաժողովի ստեղծումը,
- 8)լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- 9) համայնքի ղեկավարը և ավագանին:

26.Նշանակում և ազատում է կենտրոնի տնօրենին, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, իրականացնում է կենտրոնի կառավարման մարմինների ձևավորումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

27.Վերահսկողություն է իրականացնում կենտրոնի գործունեության նկատմամբ

28.Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամաններն, հրահանգները, ու ցուցումները:

29.Լսում է կենտրոնի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները:

30.Վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ:

31.Համայնքի ավագանու որոշմամբ կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված դեպքում, համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար:

32.Հաստատում է կենտրոնի տարեկան հաշվեկշիռը:

33.Իրականացնում է կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

34.Տնօրենը.

- 1)հիմնադրի լիազորագրի համաձայն հանդես է գալիս կենտրոնի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,
- 2)սահմանում է կենտրոնի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
- 3) նախագահում է կենտրոնի մանկավարժական խորհրդի նիստերը,

- 4) ՀՀ օրենսդրության, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
 - 5) տալիս է կենտրոնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորագրման իրավունքով լիազորագրեր,
 - 6) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կենտրոնի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
 - 7) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
 - 8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
 - 9) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և ստորոգծում անհրաժեշտ պայմաններ,
 - 10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
 - 11) վերահսկողություն է իրականացնում կենտրոնի աշխատակիցների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
 - 12) տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,
 - 13) տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառված վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար,
 - 14) տնօրենն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ,
 - 15) տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման և հրամանի համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
35. Կենտրոնի տնօրենի ուսումնադաստիարակչական և գեղարվեստական գծով տեղակալը.
- 1) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի նիրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար,
 - 2) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը,
 - 3) կենտրոնում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ,
 - 4) ընդհանրացնում և տարածում է լավագույն խմբավարների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,
 - 5) ուսումնասիրում է մշակութային միջավայրը և դրան ու ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպում գեղարվեստական միջոցառումներ,
 - 6) ուսումնասիրում է այլ մշակույթի տների, կենտրոնների փորձը և դրանց դրական և հաջողված օրինակը ներմուծում նաև կենտրոն,
 - 7) ապահովում է կենտրոնի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը,
 - 8) կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու համար:
36. Խմբակի ղեկավարը.

- 1) ուսումնադաստիարակչական աշխատանք է կատարում խմբակ հաճախողների շրջանում, սերտորեն համագործակցելով մյուս խմբակների ղեկավարների հետ,
- 2) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, կենտրոնի տնօրինությանը ներկայացնում խմբակ հաճախողների հաճախումների ու վարքի մասին տեղեկություններ,
- 3) արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են խմբակ հաճախողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

37. Կենտրոնի սեփականությունը ձևավորվում է կենտրոնի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
38. Կենտրոնն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
39. Հիմնադիրը սեփականության իրավունքով կենտրոնին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կենտրոնի լուծարումից հետո մնացած գույքից:
40. Կենտրոնի սեփականության պահպանման հոգսը կրում է կենտրոնը:
41. Կենտրոնի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
42. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
43. Կենտրոնն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
44. Կենտրոնն իրավունք ունի ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի կամ ավագանու որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
45. Կենտրոնին ամրակցված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժնելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
46. Կենտրոնի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
47. Կենտրոնն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:
48. Կենտրոնը ֆինանսավորում է հիմնադիրը: Կենտրոնի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
49. Կենտրոնի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.
 - 1) կրթադաստիարակչական վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,
 - 2) բարեգործական, նպատակային ներդրումները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
 - 3) ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կենտրոնի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները,
 - 4) կենտրոնի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) ՀՀ օրենսդրության սահմանված կարգով,

5)կենտրոնի շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը,
6)կենտրոնը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱՊԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

- 50.Կենտրոնի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն, մինչև 18 տարեկան սաներն են, նրանց ծնողները, մանկավարժական աշխատողները:
- 51.Կենտրոնի որոշ խմբակների պարապմունքներին կարող են մասնակցել նաև 18 տարին լրացած անձինք:
- 52.Սովորողների ընդունելության ժամանակ կենտրոնի տնօրինությունը պարտավոր է ծնողներին ծանոթացնել կենտրոնի կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են կենտրոնի գործունեությունը: Սովորողների պարտականություններն ու իրավունքները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով և կենտրոնի ներքին կարգապահական կանոններով:
- 53.Կենտրոնի անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ:
- 54.Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձիք, ովքեր ըստ մասնագիտության ունեն անհրաժեշտ մասնագիտամանկավարժական որակավորում:
- 55.Կենտրոնի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կենտրոնի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
- 56.Կենտրոնի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:
- 57.Կենտրոնում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
- 58.Խմբակ հաճախողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել կենտրոնի գույքին, պահպանել կենտրոնի ներքին կարգապահական կանոնները:
- 59.Կենտրոնի սաների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կենտրոնի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

60. Կենտրոնը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվար 2022 թվականի թիվ 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ՄԵՂՐԱԶՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը կազմակերպության անվանման փոփոխությամբ պայմանավորված՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կիրցրած ճանաչել Մեղրաձոր համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 10-ի <<Մեղրաձոր համայնքի <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը մեղրաձորի համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին>> թիվ 26 որոշման 5-րդ կետի բ) ենթակետը:

Կողմ -12

Դեմ -0

Չեղնալահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒԶԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՌԱՔԵԼ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԿԱԶՄՎԵԼ Է <<11>> 01.2022 թ.

ԲԱՂԿԱՑԱԾ Է 7 ԹԵՐԹԻՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի

№ 15 ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

«ՄԵՂՐԱԶՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

/Նոր խմբագրություն/

Ք.ԾԱՂԿԱԶՈՐ

2022թ.

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝Համայնքային կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հանդիսանում է «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության /գրանցման համար 85.140.01031/ վերակազմավորման արդյունքում ստեղծված <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության /գրանցման համար՝ 85.215.83950/ իրավահաջորդը:

2.Համայնքային կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա օրենքով սահմանված կարգով համայնքային գրանցման պահից:

3.Համայնքային կազմակերպության հիմնադիրը Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքն է՝ ի դեմս Ծաղկաձոր համայնքի ավագանու:

4. Համայնքային կազմակերպության կառավարման լիազոր մարմինն Ծաղկաձոր համայնքի ավագանին է(այսուհետ՝Լիազոր մարմին),որն ունի Համայնքային կազմակերպության գործունեությանը և կառավարման վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

5. Համայնքային կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով,Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

6. Համայնքային կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Համայնքային կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական գույքային իրավունքներ,կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Համայնքային կազմակերպությունն այլ կազմակերպություններ հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Համայնքային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

9. Համայնքային կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք , ձևաթղթեր , խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

10. Համայնքային կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

11. Համայնքային կազմակերպության անվանումն է

հայերեն լրիվ՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

1)հայերեն կրճատ՝ «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ

2) ռուսերեն լրիվ՝ Республика Армения Котайкская Община Цахкадзор «Меградзорская врачебная амбулатория» общинная некоммерческая организация

3) ռուսերեն կրճատ՝ «Меградзорская врачебная амбулатория» ОНО

4) անգլերեն լրիվ՝ Tsakhkadzor community of Kotayk region of the Republic of Armenia «Meghradzor Medical Ambulatory» community non comers organization

5) անգլերեն կրճատ՝ «Meghradzor Medical Ambulatory»CNCO

Համայնքային կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն , Կոտայքի մարզ , գ.Մեղրաձոր 1փ.18 շ./2315/:

II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. Համայնքային կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

- 1) բնակչության առողջության պահպանումը, բարելավումը,
- 2) առողջ ապրելակերպի քարոզչությունը,
- 3) հիվանդությունների կանխարգելումը,
- 4) պետություն կողմից երաշխավորված բժշկական օգնության սպասարկում իրականացնելը:

13. Համայնքային կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

14. Համայնքային կազմակերպությունը ձեռնակատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով հիմնադրի որոշման հիման վրա հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից:

15. Համայնքային կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնակատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1) բժշկական օգնություն և սպասարկում (բացի պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման)

III. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

16. Համայնքային կազմակերպության կառավարումը իրականացնում է հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը(Ծաղկաձոր համայնքի ղեկավար) և գործադիր մարմինը(այսուհետ՝ տնօրեն):

17. Լիազոր մարմինը՝

1) իրականացնում է համայնքային կազմակերպության ընդհանուր կառավարումը ապահովում է նրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ ստեղծում է համայնքային կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

3) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է նրակառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները:

4) իրականացնում է վերահսկողություն համայնքային կազմակերպության գործունեության նկատմամբ:

5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Համայնքային կազմակերպության տնօրենի՝ հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները:

6) լսում է Համայնքային կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության արդյունքները:

7) իրականացնում է վերահսկողություն համայնքային կազմակերպությամբ ստեղծված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ:

8) վերահսկողություն է իրականացնում համայնքային կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ:

9) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս համայնքային կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար:

10) հաստատում է Համայնքային կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ:

11) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

18. Համայնքային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Համայնքային կազմակերպության տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է (նրա լիազորությունները դադարեցվում են) լիազոր մարմնի հրամանով՝ հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

19. Տնօրենը Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Համայնքային կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի Համայնքային կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Համայնքային կազմակերպությանը և (կամ) պետության պատճառված գույքային վնասի համար:

Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի հանդիսանալու պատճառված վնասը հատուցելու ու պարտականությունները չկատարելու համար:

21.Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարով աշխատանք , բացի գիտական ,մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

22.Տնօրենը՝

1) առանց լիազորի հանդես է գալիս Համայնքային կազմակերպության անունից,ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

2)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,հիմնադրի լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Համայնքային կազմակերպության գույքը այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3)տալիս է Համայնքային կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4)աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Համայնքային կազմակերպության աշխատակիցներին,նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգաօպահական տույժեր.

5) բանկերում բացում հաշվարկային հաշիվներ

6)կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7)սահմանում է Համայնքային կազմակերպության կառուցվածքն կառուծվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

8)հաստատում է Համայնքային կազմակերպության հիմնարկների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները

9)նշանակում է Համայնքային կազմակերպության հիմնարկների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարներին ,նրանց տալիս համապատասխան լիազորագրեր.

10)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորություններ սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցունժմներ և վերահսկում դրամժնց կատարումը.

11 իրականացնում է Հայաստանի հանրապետության օրենսդրության ը չհակասող այլ լիազորություններ:

IV.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

23.Համայնքային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող , ինչպես նաև համայնքային կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից.

1/կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից.

2/ Հայաստանի Հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից.

3/ Իրավաբանական և ֆիզիկական անձանց(այդ թվում՝ արտերկիր) կողմից կատարված ներդրումներից, այդ թվում բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

4/ Համայնքային կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքներից.

5/ Կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ միջոցներից:

7/ Օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

24. Համայնքային կազմակերպությունն իրավունք ունի օրենքին , հիմնադրի որոշումներին և(կամ) իր կանոնադրության համապատասխան ՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

25. Համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը ըունի իրավունքներ, բացառությամբ Համայնքային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

26. Համայնքային կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Համայնքային կազմակերպությունը:

27. Համայնքային կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

28. Համայնքային կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ֆինանսական վերստուգման(աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կողմից կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողական այլ ստորաբաժանման կողմից:

29. Համայնքային կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով , իր առջև դրված նպատակների իրականացման համար:

30. Հիմնադիրը կարող է Համայնքային կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից համայնքային կազմակերպությանն ամրացված գույքը:

31. Համայնքային կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:

32. Համայնքային կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

32.Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները և ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները Համայնքային կազմակերպության սեփականությունն են:

34. Համայնքային կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

35.Հիմնադրի կողմից Համայնքային կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կա երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

36.Հիմնադրի կողմից Համայնքային կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի և կամ պարտադիր համայնքային գրանցման ենթակա գույքի նկատմամբ Համայնքային կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի համայնքային գրանցման պահից:

V.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

37. Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100տոկոս համայնքային մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի ,ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

38. Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

39. Համայնքային կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

40. Համայնքային կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

41. Համայնքային կազմակերպության լուծարման դեպքում Համայնքային կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվար 2022 թվականի թիվ 16
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 124
ՈՐՈՇՄԱՆ 4-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի << Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների 2022 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 124 որոշման 4-րդ կետը:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒԶԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվար 2022 թվականի թիվ 17
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 61
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 06-ի <<Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին>> թիվ 61 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հղումների մեջ << ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ ԱՏ-23/09/2017-20-0021 տեղեկանքը>> բառերը փոխարինել <<Դավիթ Անդրեասի Սարգսյանի 2017 թվականի հոկտեմբերի 02-ի դիմումը>> բառերով:

2) որոշման 2-րդ կետի <<3 986 500>> թիվը փոխարինել <<4 460 750>> թվով:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվար 2022 թվականի թիվ 18
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՐ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի սեփականություն հանսդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր, 1-ին փողոց, թիվ 18 հասցեում գտնվող շինության 252.98 քառակուսի մետր մակերեսով տարածքը 25 տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒԶԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՎԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունվար 2022 թվականի թիվ 19
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի 2021 թվականի հուլիսի 20-ի թիվ ՎԴ/1734/05/21 որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ծաղկաձոր համայնքի ավագանու անդամ Արմենուհի Առաքելյանին /անձնագիր՝ AM0909082, տրված՝ 2012 թվականի հոկտեմբերի 18-ին, 049-ի կողմից/ լիազորել Ծաղկաձոր համայնքի ավագանու անունունից հանդես գալու Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանում՝ թիվ ՎԴ/1734/05/21 վարչական գործով:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՄԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱԾԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

